

զուտ ձեռքը, այն տարվանից սկսեց 300 բուրլ արդիւնք տալ: Ան ապագէս են մեր հողաբարձ- ձուները ծառայում ազգային շահերին:»

Ան մեր ժողովրդի սնտիապաշտութեան մի օրինակ, որ մեր հողերականութիւնը պէտք է աշխատել հանել ժողովրդի միջից, բայց ընդհա- կառակն հողերականներից ոմանք պահպանում են, մի քանի կօպէկ արդիւնքի համար: Եւսու- զաւառի Գէյրուլաղ գիւղից ոչ հեռու կայ մի սև քար, որին սուրբ են համարում և նրան մի առանձին սուրբի անուն են տալիս: Ամենայն տեղից ժողովուրդը գալիս է պաշտելու այդ քարը և նրան զոհեր է բերում: Միթէ մաքուր քրիստոնէութեան հետ կարելի է միացնել այդ տեսակ սնտիապաշտութիւններ, հարցնում է մեր թղթակիցը:

Մեզ պատմում են որ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում այս օրերս մեծ խոտակցութեան առա- կայ է եղած «Մշակի» մեր հաղորդված լուրը, որ այդ դպրոցի վեցերորդ դաստան մէջ շարա- թական 38 դաս կայ: Միթէ մինչև այժմ իրանք գործողները այդ դպրոցի մէջ չը գիտէին այդ իրողութիւնը:

Քաղում ենք հետեւել լուրերը ԱՍՏՐԱԽԱՆԻՅ ստացած մի նամակից: «Հոկտեմբերի 12-ին պ. Ալաբեան, մասնակցութեամբ մի քանի սիրող- ների, մեր ձեռնվար թատրոնում տուց մի ներ- կայացում իր օգտին: Խաղացին «Արշակ Ար- րուզ» ողբերգութիւնը, զորն ինքն Գալֆայեա- նի և «Ալամայ բոլիշ» Մոլլերի, թատրոնը հա- մարեա լի էր: Գանկալի է որ պ. Ալաբեան մի ներկայացումն էլ տար յօգուտ մի ուսումնա- րանների: Հասարակութիւնը անհամբեր սպա- սում է որ ներկայացնեն լիողոպտված փոստ: պիւսան, որ մեզ մօտ նորից թարգմանեցին, չը նայելով որ նոյն պիւսան հարկւր անգամ խաղացվեցաւ Թիֆլիսում հայերէն լեզուով, ու- բնին վաղուց է թարգմանված: Վերջին ժամա- նակ մեր հարուստները մէջ դարձել է սէր դէպի հայոց լրագրութեան ընթերցանութիւնը: Շատե- րը կարգում են, դատողութիւններ են տալիս և վիճում են մանաւանդ հայոց խնդրի մասին: Մի քանի երիտասարդներ թարգմանում են ժամա- նակ առ ժամանակ յօդուածներ հայոց լրագրի-

թէ այդ տեսակ լուր ֆրագրեր տեսու, այլ գործը իր իսկական դրութեամբ հասարակութեանը ծա- նօթացնելու մտքով կրկնում ենք, որ ստորին արհեստաւորաց դասակարգի զաւակները ամա- նկին հարբ չունեն 8—10 տարի ուսումն չա- բուսակելու և բոլոր վիճակագրական թիւերը այն են հաստատում, որ այդպիսի երեխայք 3—4 տարուց յետոյ հեռանում են դպրոցից գործի կանգնելով: Մեր այս խօսքերը հաստատում է «Մեղուի» 1874 թիւակնի № 37 առաջնորդող յօդուածը, որտեղ գրողը աւելի մօտ լինելով դպրոցին, յայտնում է՝ որ Ներս. դպրոցի 300 աշակերտից 200-ը թողնում են դպրոցը ստորին դաստաններից սկսած, ի նկատի ունելով այս- պիսի հանգամանք, մենք էլ կարծել էինք և կարծում ենք, որ ծխական դպրոցները ոչ թէ մի շարունակութիւն պէտք է լինեն Ներս. դպ- րոցի, այլ աւելի ընդհանուր, ամփոփ տա- րական կրթութիւն տուող հիմնարկութիւններ, որից դուրս գալով աշակերտները՝ կարողանան ունենալ ընդհանուր զարգացումն և միջոց ունե- նան օգտվել, շահվել իրանց ձեռք բերած ու- սումից:

Իսկ ինչ որ կը վերաբերի հակառակորդների այն խօսքերին թէ՛ ամենք ուրախ պէտք է լի- նենք, որ Նահապետեանը արժանացրել է իր ուշադրութիւնը ծխական դպրոցների վրա, ապա մենք կարծում ենք, որ պարոնները այդ- քան չողորթութեանը յօնքը չլինելու տեղ՝ աչքն էլ են հանում: Այդ տեսակ անհնոր՝ փաստարանութեամբ պ. Նահապետեանցին ներ- կայացնել մի այնպիսի անձնաւորութիւն, որը պէտք է արժանացնէ միայն իր ուշադրու- թիւնը ծխական դպրոցների վրա իր բարձրու- թիւնից, կը նշանակէ ուրեմն ծխական դպրոց- ների աշակերտներին ազգի խորթ որդիք համա- րել կամ թուրքի և քրդի զաւակներ, որոնց վրա պ. Նահապետեանը, որ ազգային դպրոցի պաշ- տօնեայ է, պէտք է երբեմն երբեմն իր բարձ- րութիւնից դարձնէ իր քաղցր ուշադրութիւնը, որպէս զի դրանով մի փոքր ուրախացնէ մեզ...

ներից, մանաւանդ «Մշակի» առաջնորդող յօ- ղուածներ և սպաղորում են ուսուցիչներ լեզուով այդ յօդուածները տեղիս «Справочный Листок» թերթի մէջ: Խմբագիրը այդ յօդուածները սպաղ- րում է այն պայմանով որ այն համարը, որի մէջ սպաղորված է այդ տեսակ յօդուած, առնվի 100 օրինակի քանակութեամբ, այսինքն որ իրան վճարովի անպատճառ հատով ծախվող հարկը համարի գինը: Երիտասարդները այդպէս էլ անում են և այն համարները, որտեղ հայոց վրա արտատպված յօդուած կայ, 100 օրինակ գնե- լով, ձրի են տարածում իրանց ծանօթների, մա- նաւանդ հարուստների մէջ:

ԳԱՆՁԱԿԻՅ մեզ գրում են: «Օրերումս քա- դարիս նահանգական դատարանում քննվեցաւ Արարուի եկեղեցական հողերի գործը: Եկեղեցին շատ հին ժամանակից տիրում էր այդ հողին, որի մի մասի վրա գտնականները այդինքն էին անկել, խոտածալով մի սաժէն լայնութեամբ և 150 սաժէն երկայնութեամբ կտորի համար հողատիրոջը գնանալարձ տալ տարեկան 80 կօպէկ: Բայց այդի չինող պարոնները, օգուտ քաղելով տեղական հողերը իշխանութեան ան- փորձութենից, թէ անհոգութենից, առանց պա- մանագրի այդինքնը անկելով, մի քանի տարի արդէն տիրել էին հողերի վրա և վերջը, երբ տեսան որ հողերը իշխանութիւնը սկսում է պահանջել գնանալարձը, սկսեցին զանազան սպառնալիքներ անել: Գործը վերջացաւ նրանով որ Մինոգի մի անգամ գալով Գանձակ, ստիպ- վեցաւ ամենաշինն գնով վաճառել գետինը այ- զի չինող պարոնների վրա: Իսկ այժմ նոյն պա- րոններից ոմանք առաջ կանգնելով, նոյն հողի մի մասն էլ ցանկանում են յատկացնել քաղա- քին: Ան այդ գործն էր քննվում: Գատարանը վճեց հարցնել մերձակայ, դրացի բնակիչների վկայութիւնը անցնալ տիրապետութեան մասին: Ասում են որ հողի գործում դեր խաղացող մի պարոն շատ է ցանկանում դարձնալ մի հինգ հարկւր բուրլ վարձատրութիւն ստանալու:

Երէկ, խմբագրատան մէջ, ինչպէս ամեն առաւօտ սովորութիւն ունենք, փոքաւոր ծրար- ներ, հասարակ նամակներ և լրագիրներ բանալու ժամանակ, յանկարծ զարմացմամբ տեսաք թէ ԲԱԳՈՒԻՅ մի պարոն Ե. Ա. ուղարկում է մեզ

Դոնէ մենք, որ միայն խնդրել պարզելու համար արել էինք վերոյիշեալ նկատողութիւնը, չենք ունեցել պ. Նահապետեանի վրա վերոյիշեալ մօլար կարծիքը: Նոյն լեզուն բանեցնում է «Մեղուի» № 209 յօդուածագիրը, իբր թէ հե- րումն գրելով մեր յօդուածի դէմ, բայց իսկա- պէս չողորթութիւն է իր հաշիւների համար պ. Չիլիանեանցին, որը նոյնպէս տեսու է համար- վում ուսումնարանի: Այդ յօդուածի հեղինա- կը հասկացնում է ընթերցողներին թէ ընտրու- թիւնը անաջող չէր, այլ շատ յաջող էր, որով հետեւ ծանրակշիւ մարդիկ աւելի կարող են իրանդարել գործը և նրանք ընտրվում են միայն փաստարանութեան համար և ուրեմն ուրախ պէտք է լինենք, երբ թեթեւակշիւները մի գործում գերազատվում են ծանրակշիւներից: Հեղինակը թէպէտ խոստովանում է, որ պ. Խ. Քալանթա- րեանի հետ ծանօթ չէ, բայց համոզված է որ նա շատ լաւ կարող է գործել անտեսական մա- տում, և վերջապէս դարձանում է թէ պ. Բոլ. Չիլիանեանցի դէմ ինչպէս յանդգնում է մի որ և իցէ Կ. Կ. խօսել, քանի որ նա միակ հանձարն է, որ ընկել է երկնքից հայերի համար և որի հետ ծանօթ լինելը, կամ աւելի ուղիղ, որի փնջերին կպելը մեզ համար այնքան պատիւ է, որքան մի մանուսակների համար Մեքքա գնալը և Մահմէդի գերեզման համարները: Տեսնենք թէ ինչ հիմքերով է հերքում պարոնը ընտրու- թեան անաջողութիւնը: Ան և նրա խօսքերը, լսելով 16 ընտրեալներից երկու երեքը չեն հա- մակրում, դրանով դեռ չէ կարելի ապացու- ցանել որ ընտրութիւնը անաջող էր, որով հետեւ տակաւին մնում են 10-ից աւելի համակրողներ, թէպէտ և նրանցից ոմանք, ով գիտէ, ինչ պատճառներից ստիպված չեն կարողացել ներկայ գտնվել ժողովներին: Մենք շատ մեծ մարդիկը դեռ անյարմար էլ ենք համարում և ցանկից այդպիսիների անուանք բա- ջիւ մարդիկ թող ծանր նստեն, նրանք ծանր գործերով կը լինեն բեռնաւորված և զժուար

31 բուրլ յօդուտ Մեղրիում մի մասնաւոր հրդե- հից փնտրված պարոնի: Մենք մեր լրագրում այդ նպատակով հանգանակութիւն ընդունելու մա- սին երբէք ոչինչ յայտնած չենք, ուստի առա- ջին փոստով յետ կը դարձնենք պարոնին իր ուղարկած գումարը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆԻԻՐ

Կ. Պօլսի «Մանգուժէի Էֆէրար» լրագրի մէջ կարգում ենք Գրիգոր Նիկողոսեանի հետեւեալ պատասխանը պ. Մարկոս Աղա- րէկեանին, անտեսական խնդրի վերաբերու- թեամբ:

Ուրիշ գրաւոր զբաղմունքներ աճողջ շա- բաթ արգելք եղան շարունակելու մեր ու- նեցած խօսակցութիւնը պ. Մարկոս Աղա- րէկեանի հետ: Խօսքը մնաց ապա հո- վաւ թեան խնդրի վրա: Պ. Մարկոս Աղա- րէկեան, իսկ նորանից առաջ էլ մի քանի ուրիշներ, Հայաստանի մէջ որ և է գործ յառաջացնելու միակ պայմանը և սին է ք վա ն օն դնում են սոսկ ապահովութեան հարցը: Երբեք, Հայաստանի մէջ քրիզի- լի և չէրքէպերի անկարգութիւնները, նոյնպէս և ուրիշ կամայականութիւններ բանը այնտեղ հասցրին, որ 61-երորդ յօ- դուածի գոյութիւնը ծնվեց ամենաստիպո- ղական կարեւորութիւնից... Շա՛տ լաւ, այս- պիսի կարեւորութեան դէմ մի բան տակը կը նշանակէ միայն գլխին դօռ տալ ձգնիլ: Բայց թողնենք Հայաստանի ժողովրդի այժ- մեան կացութիւնը և անմիջապէս պայ- մանները՝ ու դարձնենք մեր ուշադրու- թիւնը այն կացութեան և պայմաններին, որոնց մէջ գտնվել են Հայաստանի հայերը ստորինից մի դար, կէս դար, երեսուն կամ գէթ քսան տարի առաջ: Կը հարցնենք՝ արդեօք Հայաստանի հայ ժողովրդի վիճակը

թէ առանց փառասիրութեան մտնելիս լինէին գործի մէջ, ուստի պէտք է ուրախ էլ լինենք այդ ընտրութեամբ: Էյ ինչ բան կարող էք հասկացնել՝ դուք այն մարդուն, որ ծանրակշ- ջիւս՝ ասելով հակառակում է այնպիսի մարդ, որ փառասիր է ծանր գործերով է բեռնաւորված...

Եայտնելով անցեալ անգամ թէ ընտրութիւնը անաջող անցաւ, մենք ի հարկէ կարծել էինք և կարծում ենք, որ երբ մէկ տեղ 30, 40 հոգուց 10—15 մարդ են ուղում ընտրել, մի գործի հա- մար, ապա ընտրում են միշտ այնպիսիներին, որոնք աւելի կշիւս, աւելի արժանաւորութիւն, աւելի յարմարութիւն ունեն, և աւելի համա- պատասխան են գործին: Այսպիսի ընթացք ա- մեն գործի մէջ այն օգուտն ունի, որ գործը արդիւնաւոր հետեւանք է ունենում և մենք այլ ևս ընտրելուց յետոյ ստիպված չենք լինի աղա- ղակել թէ՛ Վայս ինչ մարդը ոչինչ չէ չինում, այն ինչ մարդը բոլորովին սպարդիւն է: և այլն... Մենք համարեա միշտ մեր անզուշու- թեամբ, մեր անփութութեամբ ընտրում ենք մեր հասարակական գործողներին—հողաբարձու, անուշ, թեմական տեսուչ, ձայնաւոր, քաղա- քաղուի, երեցիփոխան, քահանայ, ուսուցիչ, առաջնորդ և այլն շատ անգամ բոլորովին ան- համապատասխան, անընդունակ, անպիտան մար- դիկ: Իսկ յետոյ, այսինքն ընտրելուց յետոյ, սկսում ենք աղաղակել, լայն ինչ քահանան բո- լորովին անարժան է իր կոչմանը, այն ինչ ձայ- նաւորը կամ քաղաքաղուի իր անձնական չա- հերն է պաշտպանում, այս ինչ հողաբարձուն մտել է դպրոց, որ իր քաղցած և անընդունակ ազգականներին տեղ տայ, այն ինչ երեցիփոխա- նը զողացաւ խեղճ եկեղեցու փողերը, այն ինչ թեմական տեսուչը անուշով միայն կայ, այն ինչ դպրոցի տեսուչը բոլորովին անընդունակ է դուրս եկել և բարեարդներին օրհնելու տեղ վա- ղը պէտք է անիծել տայ միայն և այլն, և այլն: Բայց բոլորովին մոռանում ենք, որ այսպիսի տեղը երեցիքներ մենք ինքներս ենք ստեղծում մեր անզուշութեամբ, անգիտութեամբ և ան-

այդ ժամանակները խտուրթեանց և հարս- տահարութեանց նկատմամբ աւելի վատ- թա՛ր է եղել այժմեանից թէ աւելի լաւ: Կը լինի՞ արդեօք մի ոք, որը յանձնառու լինէր ապացուցանել թէ մի դար կամ կէս դար առաջ Հայաստանի ժողովրդի վիճակը քրիզից և դէրէքէյերի ձեռքից, նի- չէրինք կամ այլ բարբարոսների անիրա- ռութիւններից աւելի բարւոք և միմիա- րակն է եղել, քան թէ մեր ժամանակ- ները, երբ վերջին երկու—երեք պատե- րազմներից յետ փոքր Ասիայի ոչ-քրիստո- նեայ տարրի խտուրթիւնը և մոլեռանգու- թիւնը այնչափ ցնցվեց և այնչափ թուլա- ցաւ, որ էրզրումից սկսած մինչև Կեսարիա հինաւուրց հայ մարդիկ չեն կարող ծանա- չել իրանց ժամանակը...

Եթէ այս այսպէս է, հապա ի՞նչպէս բացատրած, որ այնչափ դժուար և սոսկա- լի պայմանների մէջ Հայաստանի հայ ժո- ղովուրդը ո՛չ միայն կարողացել է մնալ և ապրել իր ընդհ հողի վրա, այլ ևս կարո- ղացել է պարապվել երկրագործութեամբ, արհեստներով և այնպիսի վաճառականու- թեամբ, որի մի ծայրը եղել է Կեսարիա և Զնդկաստան, իսկ միւս ծայրը Զմիւնիա, Ղարաբաղ, Մոսկովա և Աստրախան: Ի՞նչպէս բացատրած այսպիսի մի երեւոյթ այնչափ աւելի մեծ դժուարութիւնների և խոչն- ղոտների մէջ, երբ ոչ չողքնաւոր են ե- ղել, ոչ երկաթուղիք, ոչ խճուղիք, ոչ սուրհանդակների երթևեկութիւն և ոչ հե- առգրական հաղորդակցութիւններ: Ի՞նչ- պէս է պատահել, որ մեր տոկուն պապերը կարողացել են անվճատ շարունակել ամեն պարագծունք շա՛տ աւելի յաջողութեամբ, քան թէ հիմայ, երբ այսչափ հա մե մա- տ ա կ ա ն հեշտութիւններից յետ, Հոյաս- տանի մէջ չէլ անհնար է մի բան անել առ ի չը զոյէ ապահովութեան:

Փոյթութեամբ, երկուսից մէկը, կամ ընտրե- լիս պէտք է լինենք աւելի աչքաբաց, զգոյշ, խոհմ և աւելի մտածող և կամ այլ ևս ընտրե- լուց յետոյ ի դուր չը պէտք է լաց լինենք մեր զուրիսը:

Տեսէք խնդրեմ: Կոկ. 3-ին ընտրում են կար- գադրող մասնաժողովի համար անգամներ. իւ- բացանչիւր անձի տալիս են մի կտոր թուղթ, որ մի 5—10 րօպէում 16 անձինք նշանակե- ղրում են մի 5—6 հոգի, իսկ յետոյ էլ չեն յի- ղում, թէ ումը գրեն և մի կերպով վերջացնե- լու համար աւարտում են ցանկը գրելով ումն ասես, այնպէս որ, գրելուց, առաջարկելուց յե- տոյ, նոր միմանց յիշեցնում են պ. պ. ընտ- րողները, որ մոռացան այս ինչ մարդուն գրե- լու: որը աւելի ծանրակշիւ է, ասելով լայս ինչ մարդուն ևս գրեցի, որովհետեւ չէի յիշում ումը գրեմ: և այլն, և այլն: Սրանից հետեւում է այն որ ինչ մարդիկ պէտք է ամենից շատ ձայնը ստանային, նրանք ստացան 1 և 2 ձայն: ովքեր պէտք է անգամներ ընտրվելին,—կանդիդատներ դուրս եկան:

Վերջապէս այն մի քանի անձինքն էլ, որոնք անգամ ընտրվեցան—այդ միայն իրանց ներկա- յութեան չնորձի էր, այնպէս որ, այն անձինք, որոնք բացակայ էին, բաւական է որ այն գի- չերը ժողովին ներկայ լինէին և դուք կը տես- նէիք, որ նրանք, ամենից շատ ձայնը ստա- ցողները և ընտրվողները կը դուրս գային: Ըն- թերցողները կը յիշեն նոյնպէս, որ մենք մեր թերցողները կը յիշեն նոյնպէս, որ մենք մեր խաղաղաշնոյթ ձայն, որ գոնէ ապագայում հա- տարակաւն գործերի համար մարդիկ ընտրելիս աւելի չըբանկատ և աւելի խոհմ վարվենք:

Կարձակ կրկնում ենք թէ մենք էլ շատ լաւ գիտենք՝ Հայաստանի ժողովրդին հարկաւոր է, նաեւ սօսի պօղ ա կ ա ն է, ունենալ շատ աւելի բարւոք և համբերելի վիճակ, քան թէ նորա ունեցածը այժմ, բայց հարցը նորանումն է թէ՛ այժմեան պայմաններին մէջ հնարին է արդեօք զոնէ այն անտեսական ընթացքը նորոգել, որը մենք ունեցել ենք մի դար և կէս դար առաջ Հայաստանի մէջ, բայց այժմ ամեն ինչ բարձի թող ենք արել, ամեն ինչ երեսի վրա ձգել ու եկել Կ. Պօլիս և ուրիշ քաղաքներ կամ քորսայական ափերներով պարսպակաւ կամ բռնակրթութիւն անելու համար... թէ ինչից է յառաջացել այսպիսի մի ակուր փոփոխութիւն մեր բնաւորութեան և տոկոսութեան մէջ, թէ ինչու է կտրվել Հայաստանի հայի սիրտը երկրագործութիւնից, արհեստներից և վաճառականութիւնից, այդ մասին հանգամանքօրէն խօսեցինք մի քանի ամիս Մանգուէի էջերում «Կարևոր խորհրդածութիւններ» մէջ, երբ մենք խօսք ունեցինք Միսիսթարեանների անցեալ և արդի ուղղութեան ու գործունէութեան հետ վստահորոյ այս նիւթի վրա երկարաբանելը անանգի ենք համարում:

Հիմա առնենք հարցի միւս կողմը Զայանի է ամենքին, որ Բարձր Հայաստանի մէջ որչափ էլ քիւրդներն են «թշնամ» և փաստաւոր հայ տարրին, նոյնչափ թըշնամի են, խորթ և փաստաւոր (եթէ դեռ ոչ աւելի) չէրքէզները, ափշարները, թիւրքերը և այլն վայրի ցեղերը փոքր Հայաստանի մէջ Բայց ինչից է յառաջ գալիս, որ հայ ժողովրդի վիճակը այս երկու մասերի մէջ միմեանցից այնչափ տարբեր է, որ գրեթէ բոլորովին նմանութիւն չը կայ: Տարին տասնութերեւ ամիս գանգամներ Պատրիարքարան, տարին տասնութերեւ ամիս նոր գաղթականութիւն Հայաստանից, տարին տասնութերեւ ամիս ծիւղ և աղաղակ ուր տեղից է այս ամենը, եթէ ոչ ինչ աւորապէս Բարձր Հայաստանից: Ինչ, փոքր Հայաստանի հայերը վարդերի վրա՞ են պառկած կամ լուսաւորութեան լոյսով՞ շողալով, բայց ինչու նոցանից էլ նոյնը չենք տեսնում երբ մենք դործ ունենք ոչ որ և է *** անուններով կոչող պամպուլներին հետ, այլ մի բազմահմուտ զբաղեցրի և պատմաբանի, վստահ որոյ անպատեհ ենք համարում, որ որ և իցէ նորից բոխչի զինուորական կարգէն՝ բացատրութիւնների նաեւ պ. Մարկոս Աղաբեկեանի նման մի պատկառելի զբաղեցրի հետ վերոյիշեալ երկույթի նկատմամբ...

«Հայաստանի մէջ ապահովութիւն չը կայ» այո՛, ապահովութիւն չը կայ շատ և շատ բաներ յառաջանելու համար, բայց մի՞թէ ապահովութիւն չը կայ Հայաստանից փախչող հազարաւոր բռնակրթներին անսիրտ և անարեւն փաշխառներին աղատելու համար՝ եւս Մի՞թէ ապահովութիւն չը կայ անպաշտպան, ազա՛հ ու անխիղճ փանհայրերին և առաջնորդներին զսպելու ու խելքի բերելու համար՝ եւս Մի՞թէ ապահովութիւն չը կայ մեր ժողովրդի ա կ ա ն ու ս ու մ ն ա ր ա ն ն ե ր ի ն աւելի վայելուչ և օրինաւոր ուղղութիւն տալու համար՝ եւս Մի՞թէ ապահովութիւն չը կայ հայկական եւոմբերից բաղկացած կարաւանային ընկերութիւններ հաստատելու համար՝ եւս Մի՞թէ ապահովութիւն չը կայ ազգի հաշտով (ինչ եմ ասում... ազգի հաշտով... որ ազգի...) մի քանի փաստաբաններ Հայաստան ուղարկելու համար՝ եւս, որ, տեղից տեղ պատեղով, պաշտպան կանգնեն գեւհիկ ժողովրդի իրաւունքներին Հայ կեղեքիներին և Հայ հարստահարիչների դէմ: Մի՞թէ ապահովութիւն չը կայ խորհրդածութեան ու նորա լեզուին յարմարացրած օրինադրքեր ձրիարար բաժանելու համար, և այլն և այլն այսպիսի հարիւր ու մէկ բաներ, որ կարելի է անել մեր սեփական ուժերով, փոխանակ ձեռնածայ նստելու և սպասելու որ երկնքից մանաւայի պէս իջնէ «ապահովութիւն» կոչված թարիքը ու այնուհետեւ, ոսկէ պէնսնենքը դրած, գնանք Հայաստան «լոյս» սփռելու համար: Բայց ո՞րն ենք արել և որի՞ն ձեռնարկել այսչափ կարևոր և ստիպողական անելիքներից զոնէ մէկին. ինչպէս որ ծոյլ երկխային, գործի և աշխատութեան անուն տալու ժամանակ խելոյն զիստ փորոս կատէ, այսպէս էլ Կ. Պօլիս գործիչներին՝ մի բան առաջարկելու ժամանակ, «ապահովութիւն չը կայ» կը լսես... Լուս, եթէ այդպէս է, նստենք տարիներով ու սպասենք, որ ապահովութիւն ստող մանան ինքը գայ ու ընկնէ մեր բերանը...

Ինչպէս ապացոյց նորա, որ «ապահովութիւն» ամենայն գործունէութեանց միակ պայման և հիմք գնողները լոյ խօսքի և ծառերի մարդիկ են, այլ ոչ գործի և արդիւնքի, ահա՛ Կովկասը: Պ. Մարկոս Աղաբեկեանը եթէ եղել է Կովկասի գաւառական քաղաքներում և գիւղերում, նա պիտի շատ լաւ իմանայ թէ ի՞նչ է այն տեղի հայ և ոչ-հայ խաղաղ և աշխատասէր ժողովրդի հայր այն աւազակային և զոգամոլ տարրից, որ սպառնում են մոզգօրները Սոցանից քաղած նեղութիւնները և տեսած զոհերը այնչափ են, որ միայն իմ ծննդեան տեղը՝ Ղուխուսայ գաւառում այն տարին, երբ հարիւր մարդ կողոպտված, յիսունչափ հոգի սպանված լինի, մի երկու հաւրիւր տուն էլ այրված, այդ տարին Աստուծոյ ուղարկած մի անօրինակ ողորմութեան տարին է: Կարգապահութեան համար Խուսաց օրէնքներից էլ խիստ օրէնք չը կարծեմ որ շատ լինի աշխարհում, բայց ի՞նչ անել խստութիւնը ու կարգապահութիւնը 2 1/2 միլիոն զայլերի համար, որոնք յափշտակում են և աւերում, խիստ անտանների մէջ և անխափանցելի մացառների յետեւ լիտղ կացած: Ահա՛ ձեզ նոյնը և Ղուխայի, և Շամախի, և Գանձակի, և Զենգեզուրի, և Գարաբաղի, երևանի, Բորչալուի, Շամախի լիւր և այլն հայաբնակ գաւառների մէջ էլ, հապա ինչու այդ տեղի հայերն էլ սպասահովութեան պոչը բռնած պարսպ չեն նստում և իրանց անտեսական ու մտաւոր գործունէութիւնից յետ քաշվում...

Վերջապէս չը մոռանանք յիշել ուրիշ բան եւս. Հայաստանի մէջ այժմ, այո՛, չը կայ ապահովութիւն նոյնչափ, որչափ հարկաւոր է. բայց ասացէ՛ք խնդրեմ, եթէ մինչև մեր ցանկացած ապահովութիւնը ձեռք բերելը (որը կարող է պատահել, որ երբեք չորսհինգ-տաս տարից յետ կը լինի...) մենք նստենք առանց ոչինչ անտեսական նախապատրաստութիւն և յառաջադիմութիւն անելու, ի՞նչ կը լինի Հայաստանի հայ ժողովրդի վիճակը, երբ յանկարծ ցանկացած բարենորոգումների և ապահովութեան հետ միասին կը թափվին Հայաստան բազմաթիւ եւրոպացի արդիւնագործողներ, ի՞նչ կը լինի մեր վիճակը այն ժամանակ, եթէ փաղօրօք, հիմիկանից չը պատրաստվենք, մեր վիճակը կը լինի այն ժամանակ փառքաւոր տըտեսական գերութիւն, քան թէ երբեք. ապացոյցը—ահա՛ Բրուսսել և այն քաղաքները, ուր կայ բաւական ապահովութիւն և ուր գետեղված են եւրոպացիք... Ահա՛

ինչ է ապաստում Հայաստանին, եթէ բնականորէն բաց նստենք միայն պատրաստ «ապահովութիւն» կուլ տալու համար: Այսչափ էր մեր ասելիքը Պ. Մարկոս Աղաբեկեանին:

ՅԻՄՆԱՍԻԱ

Ֆրանսիական միսիոնարների խորհրդում վճռվեց, որ պատգամաւորների ժողովում միջնորդութիւնների ժամանակ խորհրդանշիւր միսիոնար պարտաւոր է միայն իր վարչութեան վերաբերութեամբ առաջարկված հարցերին պատասխանել: Այդպիսով մի որ և է միսիոնարի գործողութիւնների պախարակելու, օրինակ, զինուորական միսիոնարի, չի վերաբերվի բոլոր կարիքներին, այնպէս որ կարիքներ մի քանի անգամներ կարող են իրանց տեղերի վրա մնալ կամ նոր միսիոնարութեան մէջ մտնել: Ի միջի այլոց, Ժիւլ Ֆերրի, երեւի, կը պահանջի իր պարտաւորութիւնը որովհետեւ որպէս ժողովրդական լուսաւորութեան միսիոնար, նա անկասկած կատարելապէս համապատասխանում է հասարակական կուսակցութեան ցանկութիւններին և պահանջներին Մի և նոյն ժամանակ պատգամաւորների ժողովի մեծամասնութեան նշանաւոր խումբը պահանջում է Ֆերրիի մնալը միսիոնարութեան մէջ: Կարիքները ընդհանուր քաղաքականութեան առիթով հարցմունք կանէ պատգամաւոր նաքէ, որը կամենում է այդ դէպքում անհատներին առաջ ընկնել:

Տունիսի գործերը զարմանալի ուղղութիւն ստացան: Կերուսը գրաւելու համար եղած ահագին պատրաստութիւնները նոյնպէս անպատեհ վերջացան, ինչպէս և սկզբնական արշաւանքները խրամիւրների դէմ. քան հազարից աւելի զօրք, ամեն տեսակ բնական արգելքներ և դժուարութիւնների հետ կռելով, ուղարկվեցաւ դէպի «որբազան քաղաք»՝ արտիկրան ուղարկվեցաւ այնտեղ աներկայիցի դժուարութիւններով. դիմամբ շինեցին երկաթուղու և հեռադիւրական գծեր հաղորդակցութիւնները հեշտացնելու համար. հաւաքեցին, առ հասարակ, բազմաթիւ մարդիկ, զենքեր, պաշարներ և միջոցներ տեղական արաբական ուժերի կենսութեանը զրաւելու, և այդ բոլորը միայն նրա համար, որ այդ գիւնարական ահագին պաշարներով անմարդարանկ անպատեհ լիափռուն և դրաւն կողոպտված, գաւառիկ փած քաղաքը, բոլորովին չը պատահելով հեռացած լինամուն և նրան գտնելու յոյժը կողքնելով: Մի և նոյն բանը կրկնվեցաւ, ինչ որ խրամիւրների հետ, բայց ֆրանսիացիների համար աւելի մեծ և աւելի քանդող չափերով: Ինչպէս մի ժամանակ խրամիւրները անհետացան մարդ չը գիտէ ուր, նոյնպէս և արաբական հրոսակները հրապուրեցին ֆրանսիացիներին դէպի հարաւ, անհետք ծածկվելով անպատեհ մէջ, ուր իզուր են ամեն տեսակ արշաւանքներ և գլխաւոր հրամանատարների գլխարկան օպերացիաները: Տունիսից վերադարձած պատգամաւոր Ամեդէյ Լէ-Ֆօր պատգամաւորների ժողովի մէջ, երեւի, հարց կը դրվի ինչի վերջին արշաւանքի բնաւորութեան առիթով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլիս «Stamboul» Ֆրանսիական լրագրի մէջ այս օրերս ազգեցաւ մի շատ խիստ յոգեւած Կ. Պօլիս հայերի անտարբերութեան վրա ազգային գործերի և պարտաւորութիւնների վերաբերութեամբ: Մեզ խոստացան այդ յոգեւած լրագրամուկներն ուղարկել:

—Անգլիական «Daily News» լրագրի մէջ արդիւնում մի լրագրութիւն մեծ աղմուկ գցեց այս օրերս Կ. Պօլիս մէջ: Այդ լրագրութիւնը կառավարութիւնը կարողացաւ բռնել իշխան Բիսմարկի մի հեռագիր դէպի Կ. Պօլիս գերմանական զեւպանը, որի մէջ իբր թէ ասված էր, որ եթէ Բիսմարկ կառավարութիւնը չը կատարէ Բիսմարկի կողմէ գրեւոր իր յանձն առած պարտաւորութիւնները, այն ժամանակ Եւրոպայի համաձայնութեամբ լրագրութեան թերակղզին կը յանձնվի Աւստրիային, իսկ Բիսմարկը Հայաստանի վրա հովանաւորութիւնը (պրոտէկտորատ) կը յանձնվի Ռուսաստանին: Որքան տուրջ է այդ լուրը Բիսմարկի այդ տեսակ հեռագրի մասին, յայտնի չէ:

—Մասիսի մէջ կարգում ենք: Ոմանք կը կարծեն թէ վանի վարժապետանոցին շարունակութեան համար վանէն Միսիոնար ընկերութեանը:

Թեանց) տնօրէն ժողովին հեռագիր քաղաղ անձը նոյն իսկ խրաման սրբազանն է: Մենք գրած էինք և կը կրկնեմք թէ յիշեալ հեռագիրը քաղած է պ. Խորեն խրաման աղապատեղ մի երկտասարգ: Բնկերութիւնը մի նպատակով պատասխան է տուել:

—Վասիսի մէջ կարգում ենք հետեւեալը: Հալկի կուսակալ ձեռնի փաշա աննախնայների կացութեան մը մէջ կը գտնվի գաւառական ինչ ինչ արտասովոր արարքներու պատճառով: Կը յիշվի թէ մօտեւս կարգ մը դատական պաշտօնականներ պաշտօնանկ ըրած էր առանց կատարելու օրինական պայմաններն և ի մէջ այլոց, տեղւոյն ընդհանուր գաւառագրին պաշտօնականութեան համար ըսած էր թէ ընդհանուր դժգոհութեան առջև այդ որոշումը տուած էր: Բայց այժմ Հալկի ուղիներէն և աշխարհական երեւելիներէն աւելի քան 100 հոգի հանրապի մը զրկած են գաւառական պաշտօնատուներ, յայտնելով թէ իրենց զօն էին պաշտօնագրով ընդհանուր գաւառագրին, թէ կուսակալն ի նպատակ որ որոշման ստորագրութիւններ կորցած է շատեւրէ. բայց իրենք չեն տուած:

—Առհասարակ ընտրութիւնների հետեւեալը գերմանական լրագրատաղում ցոյց տուեց, որ հասարակական կարծիքը կշիւրդ դէպի ձախ կողմը թեքվեցաւ: Այդ հետեւեալը երկու տեսակ յայտնվեցաւ. «Նախ» որ մի քանի ընտրողական շրջաններ պահանջողականները զէպի ազատամիտները անցան և երկրորդը, որ ընդդիմադրական խումբերը կատարելապէս ամբաստան, ի վերջոյ չափաւոր ազատամիտ կուսակցութեան: Ամենից շատ կորցրին, այդպէս առաւելած ազատ-պահանջականները, իշխան Բիսմարկի նոր անտեսական քաղաքականութեան երկու գլխաւոր ներկայացուցիչները՝ վերնիւլը և Կարթոֆ, բոլորովին շրտվեցան: Միայնում են որ լրագրատաղում մէկ փոքրիկ կուսակցութիւն կը կազմվի, ժողովրդական կուսակցութիւն անունով, որ մինչև այժմ վայրենիներ անուն էր, կրում է Վիրտեմբերգեան ընտրողական շրջանների մէկ մասը անցաւ ազատամիտութեան այդ արմատական ձեւին: Պահանջողական մամուլը աւելի լաւ է համարում լուր ընտրութիւնների հետեւանքի մասին, կամ եթէ խոսում է շատ քիչ և ի միջի այլոց Պահանջողական մամուլը կարծես ըզգում է, որ իր խաղաղութիւնը վերջացաւ: Ընտրութիւնների օրը, պրոգրեսիւսների կուսակցութեան համար կենսութեան հիւրանոցը ծառայում էր որպէս գլխաւոր քնակարան, որը այդ օրը կատարելապէս կենդանի պատկեր էր ներկայացնում: Հազարաւոր մարդիկ խմբված էին այդ շինութեան շուրջը, որին հակում էր պոլիցիականներին մէկ զօրք բաժին: Ընտրութիւնների մասին տալով լուրերը աղմուկ ցոյցեցող էին ընդունվում: Յափշտակութիւնը վերին աստիճանի հասաւ, երբ լրագրատաղում նորից ընտրված Բերլինի նախկին պատգամաւորները երեսային երբ հիւրանոցի զանիւնում երեւցաւ վերիսօփի ծանր կերպարանքը, հասարակութիւնը ցոյց տուեց իր խորին յայգանքը, իսկ երբ Բիսմարկ եկաւ, նրա համարակի և եռանդուն կերպարանքը ծափահարութիւնների մէջ նոր փոխութիւն բարձրացրեց: Երկուները կարճ ժամեր խօսեցին, և ժողովը միայն երեկոյան 11 ժամին ցրվեցաւ, երբ արդէն յայտնի եղան ընտրութիւնների վերջական հետեւանքները:

ՄԵՏԱԿԻ ԼԵՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 հոկտեմբերի: «Пра-вит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. 1848 թուականին լրագրների տուած թողլուութիւնը ծննդական վկայական տալու մասին երեք հրէաների վկայութեան համաձայն, Բարձրագոյն հրամանով ունեցրած է «Порядокъ» լրագիրը հաղորդում է, որ էկապիւրներից շատերը պէտք է հեռանան զեմստիների գումարման պատճառով: Խմբիւրների հարցը կը վերջացվի. գաղթականական հարցի գլխաւոր կէտերը միայն կորոշվեն ժողովները կը շարունակվեն եկող յոսնարից:

ՓԱՐԻՋ, 27 հոկտեմբերի: Տունիսից ըստացված լուրերը ազատցուցանում են, որ շատ ցեղեր հպատակութիւն են յայտնել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 հոկտեմբերի: Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 37 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 91 ռ. 75 կ., հինգերորդ 91 ռ. 12 կ., ներքին առաջին 50% փոխառութեան տոմսակը արժէ 220 ռ. 75 կ., երկրորդ 215 ռ. 50 1/2 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ. 25 1/2 կ., երկրորդ 90 ռ. 25 1/2 կ., երրորդ 90 ռ. 25 կ., ոսկի 7 ռ. 68 կ.: Ռուսաց 1 ռ. Լոնդոնի վրա արժէ 25,81 պէնս, Ամստերդամի վրա արժէ 129,75 պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 220 մարկ, Փարիզի վրա 271 ֆրանկ 12 սանտիմ: Բորսայի արամագրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ